

ՃԱՇԱԿ

ՊԱՎԻԼՈՒԹՅԱՆ ՊՊՐԱՓՐԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԼԵԶՈՒԻ (1)

Երկրորդ առաւելըութիւնն որով մանաւանդ պայծառասնաց հայերէնն՝ է գիտելն նորա վարել այլափոխ բանիւք, որովք և վարի իսկ ստէպ և յաջողութեամբ մեծաւ՝ առեալ առակաւ իմի և նմանութեամբ ի ընութենէ արարածոց, ի բարուց անասնոց, ի սովորութենէ մարդկան և ի վարելց նոցա, և այլուստ՝ ուր և տեսանիցէ մերձաւորութիւն ինչ կամ նմանութիւն։ Այսպէս, ասէ արև փոխանակ կենաց։ Զմարզպանն Սուրէն Մանուէլ միաձի արձակէր «զարեւն իւր,» ասէ Բուզանդ, «ապարգեւ արարեալ.» և Յովսէփի ի սպառնալն եղբարց իւրոց՝ երդնոյր «յարեւն ֆարաւոնի։» Ասի, «Յարեւէ արկանել,» և կամ «անկանել,» իրը սպանանել, և, մեռանել, կորուսանել զկեան։ Ի գիրս Մակարայեցոց (Գ. Մկր. Է. 18) ասի «Զքաղցր արեւդ յաշացդ հատանէի։»

Թող գէտաբնն, էլստի, սպն որ ասին զերանց, և որ գըտանին գրեթէ յամենայն լեզուս, ի պատուականագոյն անդամոց, որպէս, էլստի, ան, աչ, յեռն, առնու նմանութիւնս ազգի ազգիս հայերէնն։ Ասէ, է էլստի հանել, կամ, դանել, որպէս վճարել, ընդ էլստի, կամ, ընդ հառաբն հանել, որպէս թէ զփոխարէնն հատուցանել ումեք ընդ չարեացն։ Ան դնել, որպէս ցանկալ. յան առնուլ, այն է սիրել։ Ջեռն ուղլ օդնելէ, յեռն յան յնն հարկանել պարձել. «Մի ձեռն յանձին հարկանիցէք, եթէ ունիմք հայր զԱրքահամ» (Ոսկ. Մտթ. 11):

(1) Տես զթիւ գ.

Ասէ , առկո , զիսանուլաղատանաց , մանսաւանդ ծնողաց առ որդեակս . այսպէս ասի ժալթել աղեաց , զգալարելն ևս առեալ փոփոխական յորջորջմամբ : ԶԱբեսողոմայ ասի առ Եփր . Ել . թէ « Որդի աղեաց էր » Դաւթի . « Առաքելական աղեաց են բանքս » (Ոսկ.) :

Յազդեցութենէ տարերաց առեալ նմանութեամբ ասէ , այբել . « Այրէին ցամամաբ . » « Այրէին ընդ թշնամանսն . » որպիսի է և զայրանալն ի նմին արմատոյ : Նոյնպէս ասէ , Հարել , բարբառել զբարկութենէ . նա բարկութիւնն իսկ է այլափոխ , զի բարին է սաստիկ կամ կծու , որպէս քացափի : Նոյնպիսի է խորովեց որ զիերմն զթոյ յայտ առնէ . « Խորովիմ զձեօք » (Ոսկ.) . « Զհետ ընթանայր (Քրիստոսի) կինն Քանանացի և խորովից » (Ոսկ. Բ. Մաթ. 21) :

Ըստ բնական երեւութից է ասելն , հեղաւ զայն կամ զայնանս առաջի առաստ : Եերգս վիսպասանաց ունիմք ուղարկ փոխանակ սիրելը ի վերուսա . « Տեղ սակի , » ասէ , « տեղայր ի փեսայութեանն Սրտաշեսի , տեղայր մարդարիտ ի հարանութեան Սաթինկանն . » թէպէտ այլասացութիւնն է այս մանաւանդ քան այլափոխ բան : Սմին սակի է ասելն ծոտի , փոխանակ յաւաղան . « Ծուփի ի մատի զիցուք վասն ժարիւթեան մերոյ » (ըստ բնագրին՝ խորհեսցուք) . « Ծուփի և խնդիր անկաւ մեզ զիտել թէ . . . : »

Ի բուսոյ բարուց անասնոց է ասելն իան և ամէնէ , իբրեւ տրմուղ և անսանձ , որ զծիոց ասի , և առնու զմանկութենէ որ չէն մոտավարժ և հըսւ . « Խակ և ամենէի է մանկութիւնն . » « Որ ընդ ամենէի ալիս կամիցի ճանազարհորդել : » Այսպէս եւս ասի իոյանալ , ալանալ , զի վերայ հասանելոյ սաստիկութեամբ ի նմանութենէ արծուոյ . « Խոյացեալ սլացեալ գայր : » Անունն Հարաւ ստէսլ մոտանէ յանուանս իբրեւ յաղթ , կատաղի . այսպէս ունիմք , վարապնես , վարապնիք : Եզնիկ ասէ զօդոյ , « Մերթ գոչիցէ վարազացեալ՝ հրամանաւ , և մերթ սարսէ ի գոչելոյն սաստիւ . » և այլուր (Ոսկ. ՅԴ.) ասի . Հարապնուցնել , փոխանակ զայրացուցանելոյ : Սոցին նման են որնէլն , Եղիշեր ածել , իսծառել , հծել . « Բազում գաւառք (ի Հայոց) կրծեալք հատեալք » (Բուզ. Ե. 1) : Ունիմք աղաւեստուո՞ն զթե-

թեւ քնոյ . « Մանծաղագոյնս յաղուեսաքունս միայն զքաղցր ցանկութիւն քնոյն եեթ կատարեն » (Ուկ. Ա. Տիմ.) : Այս- ալիսի է ժարակել ախտի , բայց :

Սովորական , այլ գեղեցիկ նմանութիւն է ի բուօսց կո- չել ժաղի զմանկութիւն , որպէս և ժաղի ալեաց , ծառանալ ձենձերոյ կամ ծխոյ :

Աւելի բանք են ասելն զրարձուէ իմեքէ թէ յերին հջ , կամ թէ իցէ Երևանէրը , կամ Երևանէրը , որպէս ասէ Եզնիկ . « Ամսկը և հողմբ երկնից , ասի , ոչ եթէ յերկինս լցեն , այլ զի ի բարձրութեանն են՝ երկնից կոչին . նաեւ գծառոց ան- գամ որք ի սակաւ ինչ բարձրութեանն են՝ ասեմք թէ երկ- նաբերձ են , և զծխոյ՝ թէ յերկին կցի : » Եւ այլուր խօսե- լով զվիշապաց , « Այլ ինչ ոչ են , ասէ , վիշասկը , բայց կամ օձք մեծամեծք ցամաքայինք , կամ ձկունք անարիք ծովա- կանք , զրոց ասեն թէ լեռնաբերձք և մեծամեծք են : »

Ի դրից մարմնոյ ասէ , ընդունել , յան կաւ , առաջինն՝ իր- թեւ սիգաւ , փերեւետել . երկրորդն՝ բարձրասրարանոց երե- ւել , զքիթս ի վեր տանել , փքաւ , նոյնակէս այլափոխ բանիւք ասացեալ , որպէս և մշտանեծն կոտորել , իբր մեծաբանել . նմին հակառակին , դարձեալ այլափոխ բանիւ , կորանաւ , ընդ ժետին ճրանել առ ամօթոյ կամ ի նկունն լինելց . « Պարտ էր գէթ ամաչել , կորանաւ և ընդ գետին մտանել » (Ուկ. Եօ. 4.) :

Ի սովորութենէ կամ յարտաքին ինչ նշանաց որովք սո- վոր են մարդիկ յայտ առնել զոր խորհինն կամ զգան , որ- պիսի է առաջ առանեն կամ յնալաց Քերել ի նշան արհամարհելց , և նշանակէ , առ ոչինչ գրել , անարդել , ծաղր առնել : Այս- ալէս ասի , ընդ սոր հաբիւնել զիրաման , սոնհար լինել ումեք , զնորել զելց : Նոր իմն և նշանաւոր են , զնի է բայն առնել , կամ բնել զւլուի է ինք , որպէս գիմագրաւ լինել վտանգաց , զմահ յանձն առնուլ . առ է կործո , որպէս մոադիւր . է իոր կամ ընդ ան իրցել , որպէս զիծեցուցանել , կամ զգինւոյ ա- սել թէ « Զակամբ եկն , » որպէս միւս ևս սմին նման , « Ճար- պոյ գաւ զակամբ , » այսինքն՝ յարբենալց և յամբարտաւա- նելց այլ իմն ընդ այլց տեսանել , և այլ եւս անթիւք զրս մի ըստ միոջէ տողել աւելորդ է , մանաւանդ զի հայերենա-

սէրք տեսցեն սսէլ ի Հանդիսիս այսպիսի առացուածս ընդ-վերնագրով, «Առանձինն բանք հայերէն լեզուի : » Արդարեւ այս աղդ ասացուածոց չէ առանձինն հայերէն լեզուի միայն, առակայն մեծ մասն եւս է սեղակական հայերենի, և դիտառ-րութիւն մեր ի բերել զայսոսիկ ի մէջ իբրեւ յառանձինն ինչ իրաց հայերէն լեզուի՝ է ցուցանել թէ հարգն մեր վաղուց խէ չէին անդէտ, որպէս օրինաց լեզուի և դպրութեան, նոյնպէս և հռետորական ձեւոց ի կազմել յարդարել, նա մա-նաւանդ յերիւրել իսկ զլեզուն իբրեւ ամբողջ իմն և կատար-եալ բովանդակութիւն կամ դրութիւն լեզուի :

Յայսպիսի առատութիւն և յայսչափ կատարումն հաս-եալ լեզուին, չէր մարթ չծնուցանել մեծ իմն մատենագրա-կուն շարժումն յազգին. և այս երեւեցաւ վաղ ուրեմն, որ-պէս առ այլ աղդս որ ունին գործութիւն, նոյնպէս առ մեզ, իւրովն սկզբնական ձեւով որ է վիպասանականն, այն է պատ-մութիւն՝ ըստ նիւթոյն, բանաստեղծութիւն՝ ըստ ձեւոյն: Թէսէտ մնացորդք որ կան մեզ ի հնագոյն մատենագրութենչ-անտի՝ հատակոտորք միայն են, բաւական են սակայն ի ցու-ցանել զբոյս բարուց լեզուին, զոր համեմատեալ ընդ ազ-նուագոյն լեզուաց ժամանութին, յունին և պարսկին, գտա-նեմք համազդի ընդ նոսա ըստ ընդհանուր օրինաց, այլ ու-րոյն և ազատ ըստ հանգամանացն, որպէս առաջաքս և ա-սացուք զինի:

(Մատուցի յատաջ)

Ա. Ա. Գ.

Վ. Ա. Ր. Փ

Ս. ՄԵՄՐՈՊԱՅ ՄԱԴԲՈՅԻ

(Ըստ Կորեան)

Զպատմութիւն վարուց և գործոց Նրանելւոյն Մեսրո-պայ, ի նորին իսկ աշակերտէն յօրինեալ որ Կորիւնն կոչէր, ի քաջ մատենագրաց անտի հայ գործութեան Ոսկեղին դա-րուն, ի մի գլուխ բովանդակեալ կարձառօտ, առանց զկա-բեւորօք զանց առնելց, դնեմք ի Հանդիսի աստ յընթեր-

ցումն որոց չիցեն ծանօթ վարք և գործք առնն մեծի , որ կացեալ առաջնորդ գիւտի նշանագրաց մերոց՝ արժանի անեղծութեան եթու յիշատակ և անուն յաւհաենից ի սիրտս Հայաստանեաց : Զի ո՞ այն ոք որ զպատմութեամբ վարուց և գործոց իցէ եկեալ զառնն սքանչելոյ՝ կարիցէ չածել ընդ բերան զՄեսրոպն անուն , յորժամ բանք գնին գլորութենէն Հայոց իցեն : Որ չիցէ ոք ապահուտաւոր առ նախնիս իւր և ունիցի չնորհակալու միտս առ նոսա , պատկառ ասլաքէն կացցէ յիշատակաց Սահակայ և Մեսրոպայ , և զանուանս նոցա մեծարոյս քեցել ի բաց ի սրտէ ոչ մարթասցի : Յիրաւունս է առել զի մեծ ինչ լիցի մեղ և այն , յորժամ զմեծութիւն նոցա ի միտ առնուլ կարիցեմք (۱) :

Ա. Ալ Կորեան պատմութիւնն , զոր համառօտ իմն և ամփոփ ձեւն արկաք բովանդակել աստէն , է թէպէս գեղեցիկ հայերին ըստ պայմանի լեզուին որով վարեցան Թարգմանիչը ըսկեցէն ժամանակին , և ամենեւին հարազատ ծնունդ ազգացին հանձարոյ , որ թռիչս թեւոց բարձրաբերձս տունոյր

(۱) Տօն Արքոցն Սահակայ եւ Մեսրոպայ , կարգեալ ի վաղ ժամանակաց անտի ի տօնս տարեկանաց Եկեղեցոյ , կատարի ամ յամէ յեկեղեցիս Հայոց , ի խակաւ տեղիս սովոր եւս են դնել զտօնն մեծ ի նուիրական առուրս . այլ ի դպրոցս մեր , ի մայրաքաղաքի աստ մանաւանդ , հաղիւ ուրեք տօնախմբել թէ համեսցին զյիշատակ արանցն մեծաց , կամ , ասել թէ իցէ պարտ , ի կամս հոգաքարծուաց յանձն է խմբել զտօնն կամ ոչ :

Աւելորդ իսկ թուի մեզ ասել՝ զի զտօն Թարգմանչաց մերոց , առաւել քան զտօնն Ա. Վ. Արդանանց , ի դէպ է խմբել ի դպրոցի եւ տալ մանկվուոյ , միանզամ գէթ ի տարւոց , առնել հանդէս Սահակայ եւ Մեսրոպայ երախտեացն մեծամեծաց , յորոց վայելէ ազգ մեր համօրէն , եւ վայելեսցէ եւս առ յասպաս , — թէ միայն վայելել զիտիցէ : Միանզամայն իսկ ասացեալ՝ պարտ եւ պատշաճ է զտօնն զայն նշանաւոր առնել մեծ եւ ճշմարիտ Տօն ԴՊՐՈՑԱՅ :

Նոր իմն պատուէք Սիւնհորոսին Ա. Էցմիածնի , տուեալ առ ամենայն տեսուչս ազգային դպրոցաց որ ի Ծուսիա , խմբել ըստ պատշաճի զօր տօնի սրբոցն Սահակայ եւ Մեսրոպայ զօրէն տօնական աւուրց Հայաստանեաց , ելից զմեզ բերկրութեամբ եւ մեծաւ զոհութեամբ . իցիւ , եթէ եկեղեցական վարչութիւն մեր որ ի Թուրքիա , ըստ օրինակի Սիւնհորոսին , տացէ գէթ զնոյն առնել յամենայն զպրոցս մեր , եթէ չիցէ մարթ զօրն զայն երեւելի տօնել իբրեւ զօր նուիրական ընդ ամենայն տեղիս , ուր եւ իցէ ընակեալ ժողովուրդ Հայոց :

ի հոյակապ մատենագրաց անտի, բայց ըստ բարեկքիկ և պարզ յօրինուածոյ որ տայն զմիտոս բանից յստակ իմանալ՝ չմարթի գալ ի կը իռ թարդմանութեան Նին և Նոր կտակարանաց, մեկնութեանց և ճառից Ուկեբերանի, վեցօրէից հարազի, մանաւանդ մարդարտեայ գրոց քաջին Եղնկայ: Նմանութիւն իմն գրոց Կորեանն ըստ հանդամանաց յօրինուածոյն ընդ գիրս Ագաթանգեղեայ՝ է մեծ յոյժ, մանաւանդ ի վարդապետականս, մինչեւ թուել ունանց թէ ի նմին և ի միոյ գրչէ իցեն յօրինեալ երկոքին մատեանքն, Կորեան պատմութիւնն և Ագաթանգեղեայ թարգմանութիւն: Կորիւն, քանզի առաջի կայը նման ճառել « ԶԱզքանավեան աղդին և Հայաստան աշխարհին զաստուածաւարդեւ գրոյն », և թէ « Որպիսի՛ արամի այնպիսի նորոգատուր աստուածեղէն չնորհս երեւեցաւ » ասել, հիացեալ յափշտակեալ ի խորհուրդ « մատնանշան ծաղկեցուցանելց » զվարս և զգործս զիւրոյ վարդապետին՝ ճախրէ սանայ ի բարձունս անհնարինս: զնիւթով արարեալ զանց՝ և անգամ ոչ գնէ միտ յօրինուածոյ բանից: մարդարիտա պատուականս ցան և ցիր սիմէ ընդ բնաւ, և չունի փոյթ յեւուլ զնոսա շարիւ և մանր խնամով: Այլ որ մոտադիրն ընթեռնուցու զնորիւն, նա՛ թէ երկիցս և երիցս, առացէ գիւրաս ի միտ որ ինչ չթուիցի նմա զաւաջինն յստակ և պարզ ի գիրս սքանչելի մատենագրին, զի են ամենայնիւ հայոցի: ... ուր և բիւրիցս ընթեռնուլ չիցի բաւական առ իւմանալ զմիտս բանից հելենախօս հայ գրչաց, որոյէս զԱնյաղթին Դաւթի, որք այնպէս յաճախ հնչեն հայերէն ինչ, սրակէս ոյն թէ հելլէն մատենագրի ուրուք յանկարծ իմն ուսեալ հայ անուան՝ և ի կիր արկանիցէ: ի թարգմանութիւնս մանաւանդ վարին սոտէպ նորին իւրուրոյն բանիւք Յունարէն լեզուի, առանց գնելոյ միտ առանձինն բանից Հայերենին:

Արդ, մինչդեռ զմոտաւ ածէր Կորիւն ձեռն ի գործարկանել, և ահա գայր հասանէր հրաման վասն նորին գործոյ յառնէ ումեմնէ որ կոչէր Յովսէփ (¹), յաշակերտէ անտի

(¹) Յովսէփ կաթողիկոս, որ էր ի Խորոցիմ գեղջէ Վայոց ծորոյ աշակերտ Ս. Մաշթոցի, և ապա յաջորդէր Ս. Ամակայ:

Մեծին Մեսրոպայ . և քաջալերեալ եւս յաշակերտակցաց իւրոց , որ յորդորէին զնա ի նոյն գործ , զհասարակաց վարդապետին զվարս առաքինութեան և զգործս մեծ ամեծս ի գրի հարկանել , Կորիւն , թէպէտ կրտսեր տիովք , որպէս ասէն , քան զամենայն աշակերտակցոց իւր , անդէն « փութանակի և առանց յապաղէլց » սկիզբն առնու մատենագրել « զուաշի եղեալն » օրինակ զայս .

Այրն , ասէ , զորմէ փոյթ յանձին կալաք պատմել՝ կոչը Մաշթոց (1) , ի Հացեկաց գեղջէ Տարօնոյ , որդի առն ուրումն Վարդանաց : Ի տիս մանկութեան իւրոյ վարժեալ հելլէն դպրութեամք՝ գայր հասանէր ի գաւառն Արշակունի թագաւորաց Հայոց (2) , և կարգէր անդ դսիր ի դիւանին տրքունի , առ հազարապետութեամբ Առաւանայ ուրումն (3) : Եեալ հմուտ աշխարհական կարգաց և սիրելի զօրականաց իւրոց յարուեսանի զինուորութեան՝ գայր միանգամայն մեծաւ փութով զընթերցուածովք աստուածեղէն գրոց , և յարդարեալ զանձն ըստ ամենայնի՝ ի սպասու կայր իշխանաց :

Այլ ոչ ինչ յամէր Մեսրոպ ի քաղաքական պաշտաման իւրում և ի զինուորութեան : Մերկացեալ յետ սակաւ միոյ « զիշխանակիր ցանկութիւնն »՝ զհետ լինէր միայնակեաց կենաց և « խառնէր ի խաչակիր գունդն Քրիստոսի » : Առեալ աստա ընդ իւր զոմանս յաշակերտելցոց անտի « աւետարանութեան »՝ հօքօք հանդերձ իջանէր « յանկարգ և յանդարման աեղիս » Գողթան , քարոզել և ուսուցանել զաւետարանն Քրիստոսի : Գուն դնէր անդ Մեսրոպ գերել զամենեսեան « ի հայրենեաց տւանդելցոց » (4) , և իշխանն Գողթան , « այր

(1) Այսու անուամբ կոչէ կորիւն զԱ. Մեսրոպ յամենայն ի զիրս իւր . այլ թէ զի՞նչ իցէ Մաշթոցն անուն , կամ առ իմէ՛ Մաշթոց զնա անուանէն կորիւն եւ այլք , զունիմբ ինչ ասել հաւաստեալ :

(2) Այսինքն՝ ի քաղաքն Վաղարշապատ , որ էր մայրաքաղաք Արշակունեաց եւ , ըստ Փարպեցոյ , բուն սեպհական կալուած ազգին այնորիկ :

(3) Կարծի թէ սա իցէ Արաւամն այն զորմէ ասէ Փարպեցի լինել « Տէրն Վանանդեայ » :


(4) Այսինքն՝ ջանայր զարծուցանել զամենեսեան ի հայրենի աւան . դութեանց եւ ածել ի բրիստոնէութիւն : Ի հայրենի աւանդութիւնս էին ա-

երկիւղած և աստուածասէր», օդնական և գործակից գործոյն լինէր «միամիտ սատարութեամբ» իւրով։ Ելեալ ապա անտի Մեսրոպ գնայր առ Սահակ Կաթողիկոս, գտանել զելս իրացն՝ եթէ զիա՞րդ մարթասցեն ի բաց փարատել զիսաւար հեթանոսութեանն որ մածեալ ունէր զտեղիս տեղիս Հայաստան աշխարհին։ Խորհուրդ յայնժամ ի մէջ առնուին Սահակ և Մեսրոպ, զի գտցեն նախ նշանագիրս սեպհականս Հայերէն լեզուի. և վասն այսր գործոյ մեծի փոյթ մեծ լինէր նոցա (1)։ Գնացին ապա առ արքայն Վռամձապուհ, խնդրել ի նմանէ օգնութիւն վասն նորին խորհրդոյ։ Վահրիմ ոմն անուն հրամանաւ Վռամձապհոյ երթայր առ Հաբէլ ոմն երէց, որ էր մերձաւոր Դանիելի ուրումն ասորւոյ եպիսկոպոսի, առ որում ասէր թագաւորն գտանել նշանագրաց ինչ Հայերէն լեզուի։

Յամին հինգերորդի թագաւորութեանն Վռամձապհոյ՝ նշանագիրք Դանիելի հասանէին, ի ճեռն երիցուն Հարելի, առ Սահակ և առ Մեսրոպ. որոց ընկալեալ «դյանկարծագիւտն» ուրախ լինէին, և զերկեամ մի նորին նշանագրօք ուսուցանէր Մեսրոպ մատաղ մանկունս կարգեալս յարդեալս յայն Վռամձապհոյ։ Զայնու ժամանակաւ հասանէր Մաշթոց յաստիճան վարդապետութեան։

(Մատուսի յառաջ)

3. գ.



պարէն եւ երգը վիպասանաց, որ զդիւցապաշտ ժամանակաց զարանց թագաւորաց եւ զդիւցանց արկանէին բանս առասպելաց. եւ երկիր երգոն էր, որպէս յայտ է, գաւառն գողթան։

(1) Եւ յրաւունս էր նոցա փոյթ մեծ վասն սեպհական նշանագիրս ալիքարեստաց Հայերէն լեզուի գտաներոյ. զի, որպէս ասէ խսկ Փարավեցի, ջան անհնարին լինէր մանկուոյ զնալ ճանապարհ հնուազոյն եւ ղեզերել ընդ երկար յուսումն ասորի ղարութեան, որով վարէին յայնժամ ի պաշտամունս եկեղեցւոյ. այլ զի ժողովուրդը Հայաստանեայց չէին տեղեակ դպրութեան Ասորոց, ոչինչ օգտէին յընթերցուածոց զոր ընթեռնուին դպիրը նովին լեզուաւ յեկեղեցիս Հայոց։ Վասն այսորիկ դժուարին լինէր յոյժ զործ քարոզութեան աւետարանին Քրիստոսի ի սիխոս Հայաստան աշխարհին։

ԳԻՏԱԿԱՆ

ՏԻՓ (¹)

Բաժանումն տից . — Մանկութիւն եւ Երիտասարդութիւն . —
Հասակ հումկու . — Ծերութիւն :

ՀԱՍԱԿ ՀՈՒԺԿՈՒ . — Զտիռվք ամաց քսան և հնդից հասանէ մարդ ի կատարումն զարգացմանց , և լինի ոկիզբն հումկու հասակի : Պնդին հաստատին ամենայն մասունք սուկերաց նորա . հալումն սննդական նիւթոց որ առնի սաստիկ յոյժ յառաջնում մասին կենաց՝ անդ ուրեմն դոց ի չափ . մատառը կարողութիւնք հստանեն ի կատարումն . սույգ իրք կենաց ընդհարկանին տակաւ ընդ պատրանս երիտասարդութեան . աճէ փառասիրութիւն անձին , և զմուռ աճէ մարդ լինել ինքնօրին աղիկամի ի հանդամանս կենաց իւրոց :

Խմացութիւն մտաց մարդոց գտանի , ի տից երեսուն տիմաց մինչեւ ցքառասուն , ի կատարեալ սպայծառութեան իւրում . ի ժամանակի տատ կենաց ցուցանէ մարդ որչափ ինչ ի կարի իւրում իցէ բերել ի մէջ :

ՄԵՐՈՒԹԻՒՆ . — Որ ինչ դայ յաճումն՝ պարա է նմա և նուռագել կարողութիւնք մարդոց , յետ ժամանակս ինչ ի կատարումն անդք գնալոց , առնուն զկայ , և ապա սկսանին պակասել :

Ի տից յիսուն ամաց մինչեւ ցվաթսուն յայտ առնի նուռագումն զօրութեանց և կարողութեանց : Ի հասակի աստ կենաց ոկիզբն առնու մարդ խորհելոց զհանդիսատ : Աստ ուրեմն աներեւոյթ լինի ձեռներէց ժրութիւն զոր մարդթ էր նմա առնուլ ի կիր մինչ էրն ի հասակաշափ տիս . ոչ եւս զօրէ մարդ ձեռն ի գործ ինչ արկանել և ոչ ստեղծանել ինչ այլ , եթէ սէր փառաց ոչ երթիցէ զհետ նորա մինչեւ ի գերեզման , զմուռ աճէ նա օպտել յընչից զոր կարաց մթերել յառաջագոյն :

(¹) Տես զթիւ դ.

Զվաթսնամեան տիովք կենաց գայ հասանէ ծերութիւն : Ի ժամանակի աստ , յոր ոչ ժամանեն բազմագոյնք ի ընակ-չաց որ ի քաղաքս , լինի երագ անկումն մարդոյ , և աւուրք ամաց վարեալ տանին զնա արագ ի գերեզման : Ենչերակք նորս սկիզբն առնուն յոսկր իմն շրջելոյ , և դանդաղի տա-կաւ շրջան արեան . կարծրանան նեարդական յօդակապք որ ի մարմնի և չոտան թոյլ շարժել նմա ըստ կամս . անօպրին նրբին ոսկերք և կորուսանեն զանդութիւն . նուազի զօրու-թիւն մկանց , և ակարանան զգայունք . կարողութիւնք մասաց ոչ եւս զօրեն յազդոյլ լինել , յորժամ հասցէ անկումն համօրէն , և յամր իմն անկանին ի զօրութենէ . ուշ մուաց մանաւանդ նուազի եւս քան զեւս : Զի չիք կար ծերպյն դա-տել ողջմութեամբ զմօտաւորն , ցաւէ նմա դառնապէս յի-շատակ անցելոյն , և մեռանի զօրհանապար առ ստկաւ սա-կաւ , մինչեւ ցորմ յորում մահ իմն սահմանիչ հասցէ զրաւ առնել էութեանն որ բեռն ինչ էր նմա յաճախագոյն :

Միջին տեւումն կենաց ոչ ձգի գրեթէ քան զամս երե-սուն և հինգ . ապա գուն ուրեք դէպ լինի մարդոյ հասա-նել ի տիս ծերութեան : Պատճառք սպականութեան որ չուրջ զմեօք պատեն , թուլ զայնոսիկ որ զիետ գան զիշտնչենաւոր օրինազանց բարուց մերոց ի կանոնս առողջութեան , են բազմապատիկ առ քաղաքաւորեալ ազինս , մինչեւ ոքանչե-լիք իմն թուին արդարեւ զերծանել մեր երբեմն ի բոնու-թենէ նոցա :

Ընդ ամենայն թէ շատ՝ ամք իբր հարիւր են կենաց յազգի մարդկան : Թուի իմն լինել մարդոյ երկայնակեաց յա-մենայն անասունս իրեւ զիիոլ , զորմէ ասեն չնչել դարս եր-կուս : Զկիսէ չունիմ ինչ ձառել աստ , զորմէ վիպէ Պիւֆոն տեւել ի կեանս զհապար ամ . քանզի չիք ինչ որ ցուցանել կարիցէ՝ եթէ անասուն մի յանասնոց ատնաւորաց եկեաց երբեք այնչափ լընդ երկար :

Յ. Գ.



ՀԱԻԱՏԱԼ ՍՆՈՑԵԱԾ

Հաւատալ մնութեաց այնպէս իմն հասարակաց էր առ նախնիս , մինչեւ տեսիլ մկան միոյ ջնջենոյ , կամ երեւել գորտոյ ըստ դիմաց , բաւական էր վեր ի վայր շրջել զիրս հասարակաց : Փարփառ Մաքսիմոս ի տեսլենէ մկան զարհուրեալ , որպէս թէ առ եղեռանէ նորա լինելոյ էր դիկտատորութիւնը , հրաժարեցաւ ի պատուոյն , և հիւպատն Փղամինիոս յեւս իմն ջնջենագոյն սպատառաց եթող զհրամանատարութիւն հեծելազօրուն : Զարմանք են արդարեւ այնպիսի արանց աւագաց , որպիսի էին հիւպատքն Հռոմայեցւոց , վարել զտէրութիւնն յազդ առնելոյ հաւուց , դնել օրէնս , առնել խազաղութիւն կամ սպատերազմ , խօսել ի հաշոտթիւն , կուել դաշինս , ըստ բառաչելոյ խաշանց կամ ըստ գուշակելոյ փորոտեաց այծից : Կանոն օրէնսդիր իշխանութեան էր ի գոմա առջառոց և ի գաւիթս ուր գհաւան պարարէին : Անիրազ խրատ տայր յաւուր միում Պրումիասայ արքայի Բիւթանացւոց տալ պատերազմ ընդ Հռոմայեցիս , և թագաւորն չառնոյր յանձն . « Սպանդք » , ասէ , « հակառակ մեղ են : » « Զիսորհուրդ հաւուն նախամեծար ընտրես ուրեմն » , ասէ Անիրազ , « Քան վիրատ զօրավարի ծերոյ : » Կղաւդէոս Պուղքէր , իբրեւ մերձ էր տալ ճակատս ընդ Կարքեդոնացիս , ստիպեալ ի սովորութենէ հրաման տայր դիմայս հարցանել : Եերին համբաւ իղձքն , « Հաւաքդ » , ասեն , « Հղամին ուտել : » « Ապա , » ասէ զօրավարն , « Արէկք զնոսա ի ծով , թող արբցեն : » Արդարեւ ծաղու էին բանքն , այլ իցիւ յաղթեալ էր Կղաւդեայ . բայց նա մատնեցաւ ի պարուութիւն , և ծողովուրդն առաւել քան զառաջինն հաստատեցաւ ի հաւատս ըղձութեան :

Ընդհանուր իմն էր առ Յոյնս և առ Հռոմայեցիս ըղձութիւն : Առ Հռոմայեցիս ըղձութիւն համարէր կից ընդ քրմական իշխանութեան , որպէս թէ որ քուրմն էր՝ էր նաեւ գիտակ հանդերձելոց , իբրեւ աստուածամերձ և աստուածազգեաց : Կրկին էին առ նոսա իղձք , առաջին՝ հաւահայքն որ ի թուչելոյ կամ յերգելոյ հաւուց , և կամ յաւնլոյ կամ յոչն առնլոյ նոցա կեր գուշակէին թէ յաջող ինչ եթէ անյաջող

լինելոց էին ելք իրացն յոր ձեռն արկանել առաջի կայր : Երկրորդ, խոնարհագոյն քան զշաւահմայսն էին լերդահմայք , որ ի շարժմանց ինչ սպանդից յառաջ քան զզոհն , և մանաւանդ յետ զոհիցն ի նշանաց ինչ փորոտւոյն նոցա առնէին զգուշակութիւնն : Ի ակզբան ի մեծի պատուի էին իղձք , այլ տակաւ . ուրեմն յայտնի եղեւ խաբէութիւն նոցա , մինչեւ կիկերոնի ծաղրել զնոսա . « Նոքին իսկ , » ասէ , « լոճքն չհաւատան իւրեանց արուեստին . և յայտ անտի է , զի յորժամ հանդիսին ուրեք միմեանց ի ճանապարհի , ժալտին և ունչու առնեն զսակասուտ արուեստդիտութեամբն որով սովոր են պատրել զմիամիտս :

Յոյնք պատիւ մեծ առնէին մանաւանդ պատգամաց որոց գլխաւոր տեղիք էին ի Դեղիիս և ի Դոդոնա : Դեղիք էր քաղաք ի Տէովտիսա , գաւաս . հնոյն Նլլագաց . ի սկզբան կոչեցաւ Պիւթոն , ի Պիւթոնէ օձէ սպանելոյ , որպէս առէ առասպելն , ի նետից Ապողոնի ի տեղւոջ անդ ուր յետոյ շինեցաւ քաղաքն : Մօտ ի Դեղիիս էր մեհեան Ապողոնի առ Պատնաս լերամբ : ի վերայ բարձրաւանդակի : ի Պիւթոնէ կարծի և Պիւթիսյն , անուն կնոջ քրմի որ տայր զպատգաման յանուն Ապողոնի : Նախ ծամէր , տաեն , կինն տերեւս գավինոյ և սկսանէր մոլել , թերեւս ի զօրութենէ անտի տնկոյն . ապա ելանէր ի վերայ երեքոտանոյ եղելոյ ի վերայ քան զպատառուած մի ընդ որ ելանէր գոլորչի ժանտահոտ : Պիւթիսյն պարտէր լինել կուսան , և մանկամարդք ընտրէին ի սկզբան , յետոյ ուրեմն քառասնամեսյք եղեն նախամեծարք : Բանք պատգամացն էին չափով , բազում անգամ յոռիք , զորս մարթ էր առնուլ յերկուս միտոս : Բայց և այնպէս այս պատգամք արարին զբաղաքն և զմեհեանն անուանի ընդ ամենայն աշխարհ : Քաղաքք Յունաց , նաեւ օտար թագաւորք առաքէին ի Դեղիիս ընծայս մեծագինս , և անդր դնիին զդանձս իւրեանց ի սպահեստի ընդ պաշտպանութեամբ դիցն , թէպէտ ստէսլ երթայլին գանձքն յաւարի :

Երկրորդ պատգամ , երեւելի ի հնումն յետ դեղիեանըն Ապողոնի , թերեւս հնագոյն իսկ քան զնա , էր Արտմազքայն ի Դոդոնա , քաղաք յՆւալիւռոս , առ ոտամբ Տա-

մարտս լերին յանտառախիտ ուրեք վայրի , ուր քուրմն , կին հարցուկ , տայր պատգամն ի կաղնւոյ իմեքէ , և առնէր զգուշակութիւնն մերթ ի խարշափելոյ տերեւոց կաղնւոյն ի հողմոյ , մերթ ի դօղանջելոյ անօթոց պղնձեաց կախելոց զծառոյն , և մերթ ի մնչելոյ աղաւնեաց թաքուցելոց ընդ տերեւովքն :

Դոգոնայն յուշ առնէ մեզ զիին անտառն սօսեաց Արմաւրի , « Զորոց զսաղարթուցն սօսաւիւն , » ասէ Խորենացին , « ըստ հանդարտ և կամ սաստիկ չնչելոյ օդոյն , սովորեցան ի հմայս աշխարհիս Հայկաղանց » (Խոր. Ա. ի.) : Աօսիքն էին ազգ ինչ սպիտակ կաղամախւոյ , quercus armeniaca , զոր Խորենացին կամ աղրիւր նորա , ընթեւնու « Արմենակայ : » Ի հին ժամանակո , մինչդեռ չինուածք անօսր իմն էին , զի արուեստ շինողութեանն չէր տակաւին որպէս պարոն էր ծաղկեալ , անտառք էին փոխանակ մեկենից . ուստի և չ ամենեւին չհաւատայի հին Հոյոց եւս ունել այնպիսի ինչ տեղի նուիրական մօտ ի մայրաքաղաք իւրեանց յԱրմաւիր , և թագաւորազանց , որսլիսի էր Անուշաւանն , մինել քրմապետ . քանզի զայս թուի յայտ առնել լինելն Անուշաւանայ « Զօնեալ ըստ պաշտամանց ի սօսիսն Արմենակայ : » Զպաշտամանց նախնի Հայոց զմեր կարծիս սասացուք թերեւս առանձինն և երկայնագոյնս . այլ այս այլոյ պատեհագոյն ժամանակի գործ լիցի :

Անուշանի էր ի հնումն միւս եւս երրորդ պատգամ յանուն Արամազդայ Ամմոնի յաւաղուտն աշխարհին Լիրէացւոց , ուր երթեալ ասեն մեծին աղեքսանդրի՝ տայր հռչակել զանձն « Արամազդայ որդի : »

Ա. Մ. Գ.

(Մատուցի յառաջ)



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՂՈԹՔ ՎԵՇՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Դո՞ւստր իմ, երթ կաց յաղօթս . ահա՛ հասեալ կայ զիշեր .
Տե՛ս, ի ծագ երկնից փայլէ ոսկեղինիկ աստղը մղար .
Միզապա՛տըն բըլոց կոհականեւ տատանի ծիր .
Հազի՛ւ անդ ի բացեայ կառք մի սահի ի մըթան .
Ունկըն դիր, ի հանգիստ մըտանեն բնաւը, եւ ձառ ուղույն
Ցերեկորին հողմ Խօնափէ ըզտըւընչեանն ըզփոշի .

Այս այն ժամ է յորում մանկունք ընդ գրւարթունս կան խօսակից .
Մինչ դիմեալ զընամք ճեպով յօսարոտի ի մեր հանոյս ,
Աղածրի մանկունք համայն, ի վեր յերկինս ամբարձեալ բիբք ,
Բոկո՛տըն եւ ծեռնամածք, ի ծունք անկեալք ի վիմի ,
Ի նըմին ժամու ըզնոյն բարբառելով ըզմաղթանս ,
Ցընդհանուր Էից Հօրէն հայցեն շընո՛րհըս վասըն մեր .

Եւ ապա՝ նիրհեսցին : Ուսկեիետուր յայնժամ անուրջը ,
Հո՛յլ խուռներամ, անհամոր, ցըրիւ սըփունալք ի խաւարի ,
Ծընեա՛լք յաւուրն ի խոնարհել, յերեկորի շշունչն յետին ,
Ի հեռուստ ըզշունչ նոցա եւ զվարդազոյն տեսեալ շրմունս ,
Որպէս մեղուր զըուարթազին սլանան Խոչին ի ծաղկունս ,
Գունդազունդ գան իշանեն ի սրբահա՛կան կըտաւեայս :

Ո՛վ քուն որորոցի , ո՛վ աղօթից մանկութեան .
Զայն ի սպառ զգուալիր , ծայն ոչ երբեք մեղանչական .
Քաղցրի՛կ կըրօնք մշտածիծաղ զըուարթացեալ խնդագին .
Նախերգա՞նք հանդիսական դաշնակութեանց գիշերոյ .
Զոր օրինակ հաւ ըզգըլուս իւր ընդ թեւով դընէ իւրով .
Զողին մատաղ ա՛յսպէս մանուկ հանգուցանէ յաղօթս ի նիրհ :

Դո՞ւստր իմ, երթ կաց յաղօթս : Վասըն նորին նախ մանաւանդ
Որ զայնչափ զիշերս ըզքոյդ շարժեաց ծըփուն բընարան ,
Վասըն նորին որ յերկնից էառ ըզքեզ հոզի փափկիկ ,
Եւ ծընաւ ըզքեզ յաշխարհ , եւ յայնմհետէ մայր խանդական ,
Ի սէր բյոյն կրկինս բաժինս գործեալ ի կեանըս դառնազին ,
Ցանգ ըզկեղին ինքն էարք եւ քեզ ըզմեղըն եթող ցանգ :

Ապա վասն իմ , ի՞նձ բան նըմա առաւել պէտք են աղօթից .
Բարի է նա բեզ հանգոյն , հաւատարիմ եւ պարզասիրտ .
Ճակատ նորին՝ ջինչ վընիտ , եւ գոհացեալ անտենչ իւր սիրտ .
Գըթա՛յ ընդ բազում , ոչ ընդ ումեր նախանձի բնաւ .
Քաղցրահամբոյր եւ ըզգօն , կըրէ ըզկեանս համբերատար .
Կըրէ զչարիս անգիտացեալ թէ ո՛ ըզնոյն գործիցէ :

Գիտակ կենաց եմ առաւել . եւ կարացից ասել քեզ ,
Զարգանայցես յորժամ ի տիս՝ թեւակոխել ի վարժ ուսմանց ,
Թէ ըզհնատ պնդել ընչից , եւ արուեստի , եւ նոխութեան ,
Անմըտութեան է եւ ունա՞յն . Թէ անըստոյզն այն սափոր
Զիւրն ամօթ բազում անզամ մեզ ընդ փառաց ընկենու ,
Եւ յաճախ ի կորուստ մատնի հոգի յայդ խաղ բախտի :

Ե՛րթ կալ յաղօթս ապա վասն իմ : — Զայս ասասչիր դու հակիրմ .
«Տէ՛ր իմ , տէ՛ր . ո՛վ Աստուած իմ , հայր մեր ես դու , հայր երկնաւոր ,
Ներեա՛ մեզ , զի բարի ես . ներեա՛ մեզ , Տէ՛ր , զի մեծ ես դու »:
Թո՞ղ բանիցը թռչել զնալ ուր առաքէ քո հոգեակ .
Մի՛ ինչ հոգար . (ամենայն յաստիս ունի զիւր մանապարհ) ,
Մի՛ հոգայցես թէ յո՞ր արդեօք մոլորեցան ի շաւիդ :

Զիր ինչ աստին որ ոչ զուղիս գտեալ զնայցէ ընդ գառիթափ .
Օճապըտոյտ ընդ զաշտավայրս սողոսկի զետ մինչ ի ծովլ .
Գիտէ մեղու թէ յորում կայցէ պահեալ մեղոր ի ծաղկի .
Անդոր ի կէտ իւր թըրիչ առեալ դիմեալ ծըզի անդադար .
Յարեւ արծուի սըրանայ , խոյանայ անզոր ի զերեզման ,
Ի զարո՞ւն թեւարախիկ սուրայ ծիծառն , աղօ՞թք յերկինս :

Յորժա՞մ մայն քո վասն իմ ելեալ սլանայ առ Աստուած ,
Նըմա՞ն յայնժամ եմ գերւոյն որ ի հովախ նստեալ հանգչի
Ի բարս ուղւոյն առ վայր մի եղեալ ըզբեռն իւր ի թիկանց .
Թեթեւացեա՛լ թուլիմ ես յայնժամ , զի զբեռըն զայն վըրիպանաց ,
Ըզանցանայ եւ վըշտի զորս հնծելով ածեմ ընդ բարշ ,
Աղօթք ի բոխն , երգոյն ի ծայն , առնուն տանին անդէն ի բաց :

ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ
ՀԱՅԵՐԵԿՆ ՀԵՋՈՒՀԻ

Ա

ԱՅՍՏ ԵԼԱՆԵԼ . այցելը պես երիւլ . — ուշրժէլ նայէլ : *Տէր յայց ել Ասուայի , որպէս և ասաց : — *Յայց ել , և ծանեաւ Աստուած զիւրսն : — *Օրհնեալ Տէր Աստուած Խորայելի , զի յայց ել մեզ : — *Զի Աստուած գթած է և մարդասէր , յայց ել ձեզ :

ԱՅՑԵԼՈՒ ԼԻՆԵԼ . այցելը ուշրժէլ . — զիեժինրէր ըլւալ : *Կրօնաւորութիւն սուրբ և անարտու . . . այս է , այցելու լինել որբոց և այրեաց ի նեղութեան խրէանց : — *Աջողեցաւ գործն ի ձեռու նոցա , այցելու լինել օրինացն , վրէժինդիր լինել ի ձեռացն հեթանոսաց :

ԱՌ ԱՆԳԱՄ ՄԻ . անդամ ճը . հիմակուց հիմա . մէկ ճը : *Իւրաքանչիւր պատառատուն հանդերձիւն պատէր զառւրբան առ անդամ մի : — *Առ անդամ մի զայն ուղղեա : — *Տեսե՞ր առ անդամ մի զհամբերութիւն և զհամորձակութիւն կնոջն : ԱՆԴՈՐՐ ԱՌԱՆԵԼ , ՅԱՆԴՈՐՐ ՀԱՆԵԼ . դիւրունիւն՝ հանդէս դար : *Ի նեղութեան ինձ անդորր արարեր : — *Եհան զիս յանդորր :

ԱՆԹԵՆ ՀԱՐԿԱՆԵԼ . կրակ (մէկրով) ծաշկէլ : *Ի կրակէ անթեղ հարկանեմք , և թէպէտ կենդամնի իցէ (կրակն) , սակայն անյայտ է :

ՅԱՆՄԱՆՅԹՍ ԼԻՆԵԼ . ինչինուր ծածկէլ . ծորով : *Մո՛ւտ , կին Յերորովամու , ընդէ՞ր իցէ այդ՝ զի յանձանօթս լինիս : — *Յանձանօթս եղեալ համբեր խոնարհութեամբ :

ԱՆԿԱՆԵԼ ԶԲԱՆԻՒՔ . իւստի բանակէլ : *Մի՛ զբաղում բանիւք անկանիր , զի ոչ դոյ որ տայցէ քեզ պատասխանի : — *Յերկարագոյն նուագօք զբանիւք անկանին :

8. Գ.

ԽԵԱՄԱԿԱԼՔ ՀԱՆԴԻՍԻՒՄ

Յ. ԳՈՒՐԳԵՆ

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ